

Կոլտուրայի տարածումը կատարվում է տեխնիկական միջոցներով և սոցիալական ինստիտուտներով. մասսայական լրատվական միջոցներով, գիտության, արվեստի՝ որպես սոցիալական ինստիտուտ, կրթության, ընտանիքի, հասարակական կազմակերպությունների, պետության միջոցով: Յուրաքանչյուր հասարակության մեջ կարելի է առանձնացնել բարձր /էլիտար/ և ազգային կոլտուրա, բացի դրացնից, գոյություն ունի մասսայական կոլտուրա՝ պարզեցված և մտայնական, գեղարվեստական առումներով հասկանալի բոլորի համար: Կոլտուրայի հիմնական ֆունկցիան հարթելն է ու փոխանցելը մի սերնդից մյուսին այն ինֆորմացիան, որը ունեցել է մարդը: Նա փոխանցվում է բանավոր խոսքով, հուշարձաններով, գրականությամբ, գիտակցությամբ, փիլիսոփայությամբ, հավատքով և այլն:

Կոլտուրան այն յուրահատուկ էկոլոգիական միջավայրն է տվյալ հասարակության համար, այն մթնոլորտն է, որը մարդիկ ստեղծում են իրենց շուրջ, որպեսզի կարողանան լիարժեք ապրեն և զարգանան: Երբ մենք առավոտյան արթնանում ենք, լսում ենք արթնի կանչը կամ ծիտիկների ծվվոցը, լվացվում ենք, հաց ենք ուտում /հիմա մանրամասն ենք/. Երբ արթնանում ես, հավաքում ես անկողինդ. դա կոլտուրա է, լվացվեցիր կամ լոգանք ընդունեցիր, շուրջբոլորդ թրջվեց, պետք է մաքրես, հաց ուտելուց հետո հացը ծածկի՛ր, սեղանը մաքրի՛ր, ուտելիքը սառնարանը դի՛ր, դա կոլտուրա է: Քանի որ ամառ է և համաճարակ, շրջի՛ր դաշտերով, երբ ճանապարհին տեսնում ես թուղթ, սիգարետի տուփ կամ շիշ է գցած, դա կոլտուրա՞ է: Եթե տեսնում ես անցորդների, պետք է բարևես, թեկուզև չես ճանաչում. նրանք քո գյուղում են ապրում.դա կոլտուրա է: Դաշտում տեսնում ես գյուղացու, որը իբր արածեցնում է մի մոզի, որը հագիվ է ոտքի վրա կանգնում, և նրա կողոսկրերը կարելի է հաշվել. դա կոլտուրա՞ է. ցանկացած աշխատանք պետք է լինի որակյալ: Հազար ու մի երազանքով մտնում ես մեր գյուղի վանքը մոմ վառելու, դռները բաց են, քամուց փոշու հատիկները պարում են ներսում, ավելը սեղանի վրա է, դատարկ շշերը գետնին գցած. դա կոլտուրա՞ է: Ման եկա հայրենի դաշտերով, հիացա արևով ու պայծառ բնության գեղեցկությամբ, հավաքեցի ծաղիկներ ու որոշեցի տուն գնալ, մտա տուն, ուրախ տրամադրությամբ տատիս նվիրեցի ծաղիկները և ասացի, որ իր համար է. դա կոլտուրա է: Մենք բոլորս ճաշեցինք, ես օգնեցի հավաքել սեղանը, լվացել ամանները և սեղանին մնացած հացի փշուրները հավաքելով տվեցի հավերին, դա կոլտուրա է: Տնային գործերում ես միշտ օգնում եմ մայրիկիս և տատիկիս՝ հավաքում եմ, մաքրում, ջրում ծաղիկները, իսկ տղաները օգնում են իրենց հայրիկներին և պապիկներին գյուղատնտեսության մեջ. օրինակ՝ մանրակրկիտ ուսումնասիրում են թունաքիմիկատների բաղադրությունը , օգտագործման ձևը և անվտանգության կանոնները, որպեսզի կարտոֆիլի սրսկման ժամանակ չվնասվեն բույսերը, իսկ իրենք չթունավորվեն. դա կոլտուրա է: Երեկոյան երբ նախիրը դաշտից տուն է վերադառնում, հայրս մաքրում է կովի վրա

հավաքված միջատները, կարծես դրանով շնորհակալություն է հայտնում , որ նա մեզ կաթ է տալիս. դա կուլտուրա է:
Երբ երեկոյան ընտանիքով հավաքվում ենք հեռուստացույց դիտելու , իսկ տատիկս հնդկական սերիալների սիրահար է, նրան չնեղացնելու համար ես այդ ժամին գիրք եմ կարդում. դա կուլտուրա է:
Երբ պառկում ենք քնելու , շորերը չպետք է շարտել ամբողջ սենյակով մեկ. դա կուլտուրա՞ է:
Երբ օրը ավարտվում է, և մտովի ամփոփում ես այն, զգում ես , որ հոգիդ խաղաղ է, և դու քեզ պիտանի էակ ես զգում ` մայրիկին օգնելով, վանքի ներսը հավաքելով, ծեր տատին դաշտային ծաղկեփնջով ժպիտ պարզևելով, անժանոթ մարդկանց բարևելով, մի քանի էջ գրքից կարդալով, դա նշանակում է, որ դու այն մարդն ես, որ առաջ պիտի տանես հազարամյակներից եկած կուլտուրան, արդիականցնես ու մատուցես աշխարհին:

«1+1» թերթի խմբագրություն